ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ռուսաստանի Դաշնություն (Մոսկվա) 2017 օգոստոսի 4-6-ը գործուղման արդյունքների վերաբերյալ

1. **Անուն, ազգանունը՝**

Զարմինե Զեյթունցյան

2. **Զբաղեցրած պաշտոնը՝**

Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության զբոսաշրջության պետական կոմիտեի նախագահ

3. **Գործուղման վայրը և ժամկետները՝**

Քաղաք Մոսկվա (Ռուսաստանի Դաշնություն), 2017 թվականի օգոստոսի 4-6-ը

4. **Գործուղման նպատակը՝**

Մոսկվայի ժողովրդական տնտեսության նվաճումների ցուցահանդեսային համալիրի (ВДНХ) «Հայաստան» տաղավարում Հայաստանի զբոսաշրջային ոլորտի պատշաճ ներկայացվածության ապահովում

5. **Հանդիպումներ, ելույթներ, բարձրացված կամ քննարկված հարցերը**

Այցի ընթացքում հանդիպումներ է ունեցել

- Ռուսաստանի Դաշնությունում Հայաստանի Հանրապետության առևտրական ներկայացուցիչ Կարեն Ասոյանի հետ
- Ռուսաստանի Դաշնությունում արտակարգ և լիազոր դեսպան Վարդան Տողանյանի հետ

- Ռուսաստանում փառատոնների, ցուցահանդեսների կազմակերպիչ Էլնառա Ավագյանի հետ

- Մարկետինգային կազմակերպության տնօրեն Լիանա Անդրեյանի հետ

6. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Կարեն Ասոյանի հետ հանդիպման ընթացքում քննարկվեցին հետևյալ հարցերը.

- Մինչև սեպտեմբերի 1-ը մեծ էկրան է դրվելու տաղավարում, որտեղ անընդհատ ֆիլմեր կցուցադրվեն Հայաստանի մասին, տպագրվելու են բանեռներ, բուկլետներ, բրոշյուրներ
- Ստեղծել մեծ ինտերակտիվ, հետաքրքիր տաղավար՝ միավորելով 2 տաղավարները, որտեղ փոքր տեղեկատվական կենտրոն կլինի
- Մինչև սեպտեմբերի 1-ը ռեստորաններում, գինու և կոնյակի համտեսի բաժնում Հայստանի մասին բուկլետներ, բրոշյուրներ են դրվելու:

Դեսպանի հետ հանդիպման ընթացքում քննարկվեցին հետևյալ հարցերը.

- Ռուսաստանի տարբեր քաղաքներում անցկացվելու են Հայաստանի մշակույթի օրեր և դեսպանի հետ պայմանավորվածություն ձեռք բերվեց անցկացվող միջոցառումների մասին մեկ ամիս շուտ տեղեկացնել Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության զբոսաշրջության պետական կոմիտեին, որպեսզի կոմիտեն միջոցառումներին մասնակցի գովազդատեղեկատվական նյութերով

- Ֆինանսների առկայության դեպքում ստենդեր պատրաստել, որոնց միջոցով քաղաքացիները կարող են Հայաստանի զբոսաշրջային գրավչությունների մասին տեղեկատվություն ստանալ

Լիանա Անդրեյանի հետ հանդիպման ընթացքում քննարկվեցին հետևյալ հարցերը.

- Անցկացնել ակտիվ մարկետինգային միջոցառումներ, որոնք կնպաստեն Հայաստանի ճանաչելիության բարձրացմանը

Էլնառա Ավագյանի հետ հանդիպման ընթացքում.

Պայմանավորվածություն ձեռք բերվեց Ռուսաստանի տարբեր քաղաքներում անցկացվող փառատոններին, որտեղ միշտ լինում է հայկական տաղավար, պատրաստել Հայաստանի մասին գովազդատեղեկատվական նյութեր և ապահովել Հայաստանի ներկայացվածությունը նմանատիպ միջոցառումներին

7. Գործուղվողը՝

Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության զբոսաշրջության պետական կոմիտեի նախագահ՝ Զարմինե Զեյթունցյան

8. Ստորագրությունը, ամսաթիվը՝